600.0098.21.03.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2018 թվականի №98Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի №113Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի մարտի 14-ի №113Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Էդվարդ Վարդանյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0339 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2018 թվականի մարտի 14-ը, և անհատ ձեռնարկատերն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) անհատ ձեռնարկատերը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 12-ի №295Ա որոշմամբ անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է մինչև 2015 թվականի օգոստոսի 1-ը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 396 825 (երեք հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №363Ա որոշմամբ անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 396 175 (երեք հարյուր իննսունվեց հազար հարյուր յոթանասունհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝
   1) 2008 թվականի մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատեր Էդվարդ Վարդանյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №113Ա որոշումը,
   2) 2010 թվականի նոյեմբերի 3-ի «Անհատ ձեռնարկատեր Էդվարդ Վարդանյանի կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների մասով ունեցած պարտավորության մասին» №599Ա որոշումը:
2. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարի մասով 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2018 թվականի մարտի 14-ը հաշվարկված 420 801 (չորս հարյուր քսան հազար ութ հարյուր մեկ) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 մարտի 2018թ.